# ԵՎՐՈՊԱՅԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ (CCBE) ՆԱԽԱԳԱՀ ՄԱՐԳԱՐԵՏ ՎՈՆ ԳԱԼԵՆԸ ՇՆՈՐՀԱՎՈՐԵԼ Է ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՀԻՆ

23.09.2021 17:57

Եվրոպայի փաստաբանների և իրավաբանների միությունների խորհրդի (CCBE) նախագահ Մարգարետ վոն Գալենը շնորհավորական ուղերձ է հղել ՀՀ փաստաբանների պալատի նորընտիր նախագահ Սիմոն Բաբայանին:

Ուղերձում մասնավորապես նշվում է.

«Հայտնում ենք մեր անկեղծ շնորհավորանքը պարոն Բաբայանին ՀՀ փաստաբանների պալատի նոր նախագահ ընտրվելու կապակցությամբ և մաղթում ենք լավագույնը իր կողմից ստանձնած մանդատի կապակցությամբ:

Միաժամանակ, ցանկանում ենք շնորհակալություն հայտնել պարոն Զոհրաբյանին, Եվրոպայի փաստաբանների և իրավաբանների միությունների խորհրդի հետ երկարամյա համագործակցության և Հայաստանում փաստաբանների անկախությունը ամրապնդելուն, իրավաբանական մասնագիտության հիմնական արժեքների պաշտպանությանը նպաստելուն և Երկրում իրավունքի գերակայության նկատմամբ հարգանքը երաշխավորելուն ուղղված բոլոր ջանքերի համար»:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })